ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)

Հայաստանի Հանրապետություն

ՎԱՐԿ No. 5398-ԱՄ

ՀՀ ԱՍՀՆ կառավարման համակարգի ներքին պորտալի մշակում և ներդրում
ԱՄՄ No: SPAP II-G 2.4.3

1. Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկից ,Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագրիե Ֆինանսավորման համար և նպատակ ունի օգտագործել այս վարկային միջոցների մի մասը **««ՀՀ ԱՍՀՆ կառավարման համակարգի ներքին պորտալի մշակման և ներդրման, SPAP II-G 2.4.3»** պայմանագրի շրջանակներում վճարումների իրականացման համար:

2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն սույնով հրավիրում է պահանջներին համապատասխանող և որակավորված հայտատուներին ներկայացնել հայտեր՝ **«ՀՀ ԱՍՀՆ կառավարման համակարգի ներքին պորտալի մշակման և ներդրման, SPAP II-G 2.4.3» համար**:

3. Մրցույթը կանցկացվի «ՎՋՄԲ Վարկերի և ՄՋԸ վարկերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ» ՀԲ ուղեցույցների շրջանակներում Ազգային մրցակցային մրցույթի (NCB) ընթացակարգերի համաձայն («Գնումների ուղեցույց» 2011թ. հունվար, վերանայված 2014թ. հուլիսին) և հայտ կարող են ներկայացնել Ուղեցույցների շրջանակներում սահմանված պահանջներին համապատասխանող (eligible) բոլոր հայտատուները: Ի հավելումն, խնդրվում է ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերում սահմանված Համաշխարհային բանկի շահերի բախման վերաբերյալ քաղաքականությանը:

4. Հետաքրքրված թույլատրելի հայտատուները կարող են ամբողջական փաթեթը ներբեռնել www.gnumer.am կամ www.armeps.am կայքերից: Էլ. գնումների համակարգում գրանցված Հայտատուները ավտոմատ կերպով կստանան սույն հրավերը՝ կցվաց Մրցութային փաստաթղթերի հետ մասին /համաձայն համապատասխան CPV կոդերի/: Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլ. գնումների համակարգում և կարող է ներկայացնել Հայտը հետևյալ կայքում՝ www.armeps.am

5. Հայտերը պետք է ներկայացվեն ARMEPS էլ. գնումների համակարգի (www.armeps.am) միջոցով մինչև 2017թ. հուլիսի 19-ը, ժամը 15:00-ը: **Էլ գնումների համակարգը չի ընդունում վերջնաժամկետից ուշացված Հայտեր**:

6. Ինչպես նշված է ՄՀ 19.1 կետում բոլոր Հայտերը պետք է ուղեկցվեն **Հայտի ապահովման երաշխավորագրով**:

7. Որակավորման պայմանները ներառում են՝

(ա) Ֆինանսական կարողություններ

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ նա համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջ(ներ)ին:

- Պահանջված նվազագույն միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք (3) տարվա համար (2014-2016թթ.) պետք է հայտի արժեքից լինի առնվազն ներկայացված հայտի արժեքի չափ
- Հայտատուն պետք է տրամադրի իր ֆինանսական հաշվետվությունները վերջին երեք (3) տարիների համար:

(բ) Փորձ և տեխնիկական կարողություն

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ նա բավարարում է օգտագործման հետևյալ պահանջ(ներ)ին.

- Տեղեկատվական համակարգերի և/կամ պորտալների նախագծման, ստեղծման, ներդրման և շահագործման առնվազն երեք հաջորդող տարիների փորձ:
- Տեղեկատվական համակարգերի և/կամ պորտալների նախագծման, ստեղծման, ներդրման և շահագործման առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող մասնագետներ, հիմնական աշխատակազմում պետք է ներառված լինեն նաև սոցիալական ապահովության ոլորտի մասնագետներ:
- Առնվազն մեկ հաջողված նախագիծ վերջին 5 տարում նշելով գնորդին, պայմանագրի արժեքը, մատակարարվող ապրանքներն ու ծառայությունները:

- SS ոլորտում տվյալ ընկերությանը տեղեկատվական համակարգեր (պորտալներ) պատվիրած առնվազն 3 տարբեր կազմակերպություններից տրված երաշխավորագրերի առկայություն: